Իսրայելի նախագահ պարոն Իցխակ Հերցոգին

Հարգելի նախագահ 44 - օրյա ծանր պատերազմի օրերին, երբ կրկին դրված էր հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման և Լեռնային Ղարաբաղի հայության ֆիզիկական ոչնչացման վտանգն, Իսրայելն՝ ի տարբերություն մյուս պետությունների, շարունակում էր պատերազմի օրերին լրացնել պակասը բոլոր զինատեսակների, որոնց միջոցով խոցվում էր Արցախահայությունը: Մի շարք երկրների ղեկավարներ պաշտոնապես հաստատեցին Թուրքիայի կողմից տարածաշրջան մոտ 5000 սիրիացի ահաբեկիչների առկայության փաստերն և սա կրկին չկանգնեցրեց Իսրայելին վերազինել ահաբեկիչներին ու նրան սպասարկող ահաբեկչական ռեժիմին: Ցավալի է, որ մեր պետությունը, համարվելով Մերձավոր Արևելքի միակ դեմոկրատական երկիրը, հայտնվեց դիկտատուրական համարվող Ադրբեջանի, Թուրքիայի և Պակիստանի կողքին:

Օրեր առաջ The Economist մեդիաընկերության վերլուծական կենտրոնը հրապարակեց իր վերլուծության արդյունքները՝ դասելով Հայաստանին որպես ամենադեմոկրատական ու առաջատար պետությանը Կովկասյան տարածաշրջանում և 91-րդ հորիզոնականում, որի փոխարեն Թուրքիան 103-րդ էր իսկ Ադրբեջանը համարվում է ավտորիտար ռեժիմով բռնապետություն գրավելով 141-րդ տեղը: Ասել կուզի, որ գերժամանակակից զինատեսակների վաճառքը միջազգայնորեն բռնապետություն ճանաչված Ադրբեջանին ունեցավ Իսրայելի համա 《բումերանգի էֆեկտ》: Կտրուկ աճեցին Իսրայելի քաղաքացիների վրա հարձակումները վերջին շաբաթներին հրազենի օգտագործմամբ: Ձեր հատուկ ծառայություններն ավելի տեղեկացված են թե ի՞նչ քանակությամբ զենք ու զինամթերք ստացան սիրիացի ահաբեկիչները հրեաներին դարերով բարեկամ ու դարի առաջին Ցեղասպանությունը տեսած հայ ժողովրդին կրկին բնաջնջելու համար: Այժմ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման վտանգին գումարվել է հայկական ավելի քան 2000- ամյա մշակույթային ժառանգության վերացումը բռնազավթած հայկական տարածքներում և Լեռնային Ղարաբաղի գրավյալ տարածքներում: Դուք այն եզակի հրեա քաղաքական գործիչներից մեկն էիք, որ խոնարհվել եք Ծիծեռնակաբերդում Հայոց Ցեղասպանության հուշարձանի մոտ և լավ եք հասկանում հայ ժողովրդի ցավն ու տառապանքը:

Մեծարգո Նախագահ պրն. Հերցոգ:

Մենք որոշեցինք նամակ գրել Ձեզ, քանի որ հայտնի է, որ դուք հավատում եք բարոյականությանն և մարդասիրությանն որպես գերագույն արժեքների:

Պարոն Նախագահ, դուք հավանաբար տեղյակ եք, որ մեկ տարի առաջ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում տեղի ունեցած պատերազմի մասին:.

Մարտերը հանգեցրել են բազմաթիվ զոհերի, վիրավորների և փախստականների: Սակայն, ցավոք, մարտերը չդադարեցին,

Այսօր Ադրբեջանը ակտիվորեն աշխատում է՝ ոչնչացնելու հայկական ներկայությունը, պատմական և մշակութային ցանկացած հիշատակում, որը ներառում է հնագույն հայկական կրոնական շինությունների վնասումն, որոնցից մի

քանիսը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում են՝ որպես համաշխարհային ժառանգության օբյեկտներ:

Ադրբեջանի գործողությունների վառ օրինակներից մեկը.

1. Շուշի քաղաքի «Սպիտակ եկեղեցու» ռմբակոծությունն է, երբ իսրայելական արտադրության անօդաչու թռչող սարքերը 15 րոպեում երկու անգամ խոցեցին եկեղեցին:
2. Մեխակավանում հիմնովին ավերվել է «Սուրբ Աստվածամայր» եկեղեցին:
3. Շուշի քաղաքում «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցին նույնպես հիմնովին ավերվել է:

Ցավոք, ամեն օր ցանկն ավելի է մեծանում: Իրավիճակը կտրուկ սրվել է Ադրբեջանի մշակույթի նախարարի կողմից վերջերս արված հայտարարությունից հետո, երբ հայկական կրոնական, պատմական և մշակութային հուշարձանների ինքնությունը փոխելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու նախագծի մասին է հայտարարվել, այսպես կոչված, «ալբանական կրոնական տաճարների վերականգնման» հետ կապված:

Հայկական եկեղեցիների ալբանականացում՝ այսպես կոչված «կեղծ հայերեն գրությունների» ջնջման միջոցով, որըհամարվում է պետական վանդալիզմի գործողություն: Ադրբեջանի աննախադեպ ցինիկ ծրագրերը Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգությունը ոչնչացնելու, այն ժառանգությունն, արվեստն ու մշակույթն, որ դարեր շարունակ ստեղծվել է ստեղծարար հայ ժողովրդի կողմից, ոչ այլ ինչ են, քան քաղաքակրթական մարտահրավեր ողջ մարդկությանն և միջազգային կառույցներին, որոնք կոչված են պաշտպանելու համաշխարհային մշակութային ժառանգությունը: Այս ծրագրերը նաև հանդիսանում են մարդկության մշակութային ժառանգության պաշտպանության համար ՄԱԿ-ի բազմաթիվ կոնվենցիաների բացահայտ խախտում, բայց նաև ուղղակի անտեսում են Հաագայի Արդարադատության միջազգային դատարանի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 7-ին Ադրբեջանին ուղղված պահանջը՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու հայկական մշակութային ժառանգության դեմ ուղղված բոլոր վանդալիզմի գործողությունները, և գործել՝ մեղավորներին պատժելու և արդարադատություն վերահաստատելու սկզբունքով: Ադրբեջանի կողմից իրականացված նմանատիպ և նաև 2020 թվականի պատերազմի ժամանակ իրականացված այդ գործողություններն հստակորեն խախտել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2347 (2017) բանաձևն, որը վերաբերում է «ռազմական հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների ոչնչացման և կողոպուտին», իսկ պատերազմից հետո այս երկիրն իրականացնում է նոր վանդալիզմ և մշակույթային ցեղասպանություն:

Խախտելով ռազմագերիների և կալանավորների նկատմամբ բոլոր միջազգային նորմերը և չկատարելով նրանց ամբողջությամբ ազատ արձակելու իր անվերապահ պարտականությունը, վկայում է այս երկրի կողմից միջազգային կառույցների և մեր Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը լուծելու ջանքերի նկատմամբ ունեցած անհարգալից վերաբերմունքի մասին:

Նման գործողություններով, որոնք հաճախ սնվում են իր անձեռնմխելիության զգացումով, Ադրբեջանը ժամանակի հաշվին պայթող ռումբ է տեղադրել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում, ապագա խաղաղության տակ՝ դրան արդար հիմունքներով հասնելու հնարավորությունները դարձնելով պատրանք, իսկ խաղաղությունը՝ փխրուն և կարճատև:

Իսրայել պետությունը բացահայտորեն աջակցել է Ադրբեջանի հանրապետությանը ռազմական գործողությունների վերջին փուլի ընթացքում՝ ամենաառաջադեմ զինատեսակների մատակարարման հաշվին, որը փոխել է բալանսը նրա օգտին: Մենք ցանկանում ենք մեր սրտում հավատալ, որ չնայած Իսրայել պետության քաղաքական շահերին, որոնք աջակցել են Ադրբեջանի հանրապետությանն, Իսրայել պետությունը չի ցանկանա լինել մշակութային ցեղասպանության գործընկեր, երբ Ադրբեջանը փորձի ամբողջությամբ ոչնչացնել: տարածաշրջանի հարուստ հայկական ժառանգությունը:

Ուստի, Ձերդ Գերազանցություն Նախագահ, մեր հայացքը ձեզ վրա է՝ հուսալով, որ դուք կկարողանաք ազդել տեղի ունեցողի իրադարձությունների վրա և կբարձրաձայնեք այս իրողությունն, որ Իսրայել պետությունը դեմ է իր դաշնակցի այս գործողություններին:

Հարգանքներով՝

«Նույան Տապան» - Իսրայելի հայկական մշակույթի և կրթության կենտրոն

Նախագահ՝ Դավիթ Գալֆայան

Պետախ Տիկվայի Իսրայելահայերի «Նաիրի» միություն

Նախագահ՝ Արտյոմ Չերնամորյան